ԽՈՍՏՈՎԱՆԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Posted on June 20, 2016 by Keghart



Category: Opinions

Հրանուշ Խառատյան, Երեւան, 20 Հունիս 2016

> *Հրանուշ Խառատյանը ծնվել է 1952ին, Խորհրդային Ադրբեջանում, հայկական պատմական Ուտիքի տարածքում: Պատմաբան, ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու: Գրում է չերքեզահայերի, քրիստոնյա ուդիների, Դերսիմի, քսաներորդ դարի Թուրքիայի և Ադրբեջանի ազգային քաղաքականության, քաղաքական ճնշումների, Հայաստանի ներկայիս սոցիալ-մշակութային խնդիրների, և... հայ ժողովրդական տոների մասին:*

1936ի մայիսին 22ին, ուղիղ 80 տարի առաջ, Բերիայի դրածո տխրահռչակ Մուղդուսու գլխավորությամբ ձերբակալվեց Ներսիկ Ստեփանյանը: Այսօր այս անունը շատ քչերին է հայտնի, իսկ 1936ին շատերը գիտեին նրան: Ներսիկի ջանքերով էր, որ Մոսկվայում գտնվող Հայկական մշակույթի տունը (Լազարևյան շենքը, ներկայիս Հայաստանի դեսպանատունը ՌԴում) Բերիան չկարողացավ խլել Հայաստանից:

Ներսիկ Ստեփանյանն էր, որ դիմադրում էր Անդրֆեդերացիայի երկու շնագայլերի՝ Բերիայի և Միրջաֆար Բաղիրովի՝ Հայաստանին տնտեսական մեկուսացման մղելու ջանքերին, Ներսիկ Ստեփանյանն էր, որ փորձում էր հայկական մշակութային որոշ արժեքներ պահապանվեն (օրինակ՝ Ծիծեռնակ և Կռունկ երգերը, որոնք հայտարավել էին ազգայնական և արգելվել էին դրանց կատարումները, ուսուցումը և առհասարակ հիշատակումը), նպաստել էր Չարենցի ՛՛Գիրք ճանապարհի՛՛ գրքի հրատարակությանը ևլն:

Հրանուշ Խառատյան, Երեւան, 20 Հունիս 2016

> *Հրանուշ Խառատյանը ծնվել է 1952ին, Խորհրդային Ադրբեջանում, հայկական պատմական Ուտիքի տարածքում: Պատմաբան, ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու: Գրում է չերքեզահայերի, քրիստոնյա ուդիների, Դերսիմի, քսաներորդ դարի Թուրքիայի և Ադրբեջանի ազգային քաղաքականության, քաղաքական ճնշումների, Հայաստանի ներկայիս սոցիալ-մշակութային խնդիրների, և... հայ ժողովրդական տոների մասին:*

1936ի մայիսին 22ին, ուղիղ 80 տարի առաջ, Բերիայի դրածո տխրահռչակ Մուղդուսու գլխավորությամբ ձերբակալվեց Ներսիկ Ստեփանյանը: Այսօր այս անունը շատ քչերին է հայտնի, իսկ 1936ին շատերը գիտեին նրան: Ներսիկի ջանքերով էր, որ Մոսկվայում գտնվող Հայկական մշակույթի տունը (Լազարևյան շենքը, ներկայիս Հայաստանի դեսպանատունը ՌԴում) Բերիան չկարողացավ խլել Հայաստանից:

Ներսիկ Ստեփանյանն էր, որ դիմադրում էր Անդրֆեդերացիայի երկու շնագայլերի՝ Բերիայի և Միրջաֆար Բաղիրովի՝ Հայաստանին տնտեսական մեկուսացման մղելու ջանքերին, Ներսիկ

Ստեփանյանն էր, որ փորձում էր հայկական մշակութային որոշ արժեքներ պահապանվեն (օրինակ՝ Ծիծեռնակ և Կռունկ երգերը, որոնք հայտարավել էին ազգայնական և արգելվել էին դրանց կատարումները, ուսուցումը և առհասարակ հիշատակումը), նպաստել էր Չարենցի ″Գիրք ճանապարհի″ գրքի հրատարակությանը ևլն:

Նրա տանը գտել էին գրառումներ, որոնցում Ներսիկը փորձում էր վիճարկել Անդրֆեդերացիայի ընդհանուր բյուջեյի անհամամասն բաշխման խնդիրները և ապացուցում էին, որ նա տեղյակ է, թե ինչպես է ընդհանուր բյուջեն յուացվում Վրաստանում: Ներսիկ Ստեփանյանը Բաղիրովի և Բերիայի ″անձնական թշնամին էր″: Ներսիկի ձերբակալությունից մեկուկես ամիս անց, հուլիսի 9ին Բերիան Թիֆլիսի իր առանձնասենյակում սպանեց ՀՀ Կենտոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանին:

Խանջյանի թաղման օրվա կուսակցական ակտիվի ժողովում նրան մեղադրեցին ″տնտեսական նացիոնալիզմում″, քանի որ Խանջյանը նախաձեռնել էր, օրինակ՝ ″ժողտան″ կառուցումը Երևանում կամ Երևան-Աղստաֆա երկաթգծի կառուցումը, որով Հայաստանը դուրս էր գալիս վրացական երկաթգծի կախվածությունից:

Օգոստոսին սկսվեցին զանգվածային ձերբակալությունները: Բերիան ԽՍՀՄ ռեպրեսիաների խոսափող ″Պրավդա″ում հոդված տպագրեց Ներսիկ Ստեփանյանի կողմից Հայաստանում ստեղծված նացիոնալիստական, տրոցկիստական, տեռորիստական կազմակերպության և ″հայ ժողովրդի թշնամիների մասին″: Ձերբակալվածներից շատերը, ինչպես Բակունցը, Ալազանը, Մկրտիչ Արմենը, Դրաստամատ Տեր Սիմոնյանը և շատ ուրիշներ ″խոստովանեցին″, որ Ներսիկ Ստեփանյանը ստեղծել էր նացիոնալիստական, տրոցկիստական, տեռորիստական կազմակերպություն, և իրենց մոլորության մեջ գցելով՝ ներգրավել այդ կազմակերպության մեջ:

Երկար դիմադրելուց հետո ″խոստովանեց″ նաև Ներսիկ Ստեփանյանը: Շատերը գնդակահարվեցին: Ներսիկ Ստեփանյանի գնդակահարությանը հաջորդեցին իր երկու եղբայրների գնդակահարությունները: Ի դեպ, ձերբակալվեցին և գնդակահարվեցին նաև Ներսիկ Ստեփանյանի ձերբակալության հրամանը ստորագրած Հայաստանի գլխավոր դատախազ Պետիկ Թորոսյանը, ինքը՝ Մուղդուսին, նաև Խանջյանին փոխարինած, նույնպես Բերիայի դրածո Ամատունին, բոլորն էլ նույն՝ նացիոնալիստական, տրոցկիստական, տեռորիստական կազմակերպության անդամակցության մեղադրանքներով:

Ձերբակալվեցին և գնդակահարվեցին Սարդարապատի ճակատամարտի հերոս սպաները, նաև շարքային կամավորները, Ցեղասպանությունից փրկված բոլոր ֆիդայական առաջնորդները: Ստալինը և Բերիան Հայաստանը բեռնաթափում էին կամքից: Թերթերը փողհարում էին հայ ժողովրդի թշնամիներից ազատվելու մասին և հայ ժողովրդին կոչ էին անում շնորհակալ լինել ″հարազատ պարտիայից″ և անձամբ՝ բոլոր ժամանակների հանճարեղ ″հայր Ստալինից″:

Անցել է ութսուն տարի: ՆԳԺԿն այդպես էլ որևէ առարկայական ապացույց չգտավ ″Հայաստանում ստեղծված նացիոնալիստական, տրոցկիստական, տեռորիստական կազմակերպության″ մասին:

Այսօր, հունիսի 20ին ձերբակալվել է Ժիրայր Սեֆիլյանը: Հանրության կարծիքով՝ որովհետև փորձել է

մի փոքր բարձրացնել ապրիլյան պատերազմի վարագույրը: Քննչկան կոմիտեի հայտարարությամբ՝ տեռորիզմի մտադրություններով ցանց ստեղծելու և զենք ու զինամթերք կուտակելու մեղադրանքով: «Ժիրայր Սեֆիլյանը մի խումբ անձանց հետ ծրագրել էր զինված խմբավորումների միջոցով, զենքի գործադրմամբ, զավթել հաղորդակցության և կապի միջոցներ, այդ թվում՝ Երևանի հեռուստաաշտարակը.....»:

Ապացույցը՝ ճանապարհային ոստիկանության կողմից անհայտ մեքենայում հայտնաբերված երկու ինքնաձիգ և ՛՛բազմաթիվ խոստովանական ցուցմունքներ՛՛:

Խոստովանական ցուցմունքներով այսօր կոռուպցիայի դեմ չեն պայքարում, ապացույցներ են ուզում, այն ապացույցները, որոնք հանրության մոտ չեն, իշխանությունների մոտ են: Առանց ապացույցների ՛՛խոստովանական ցուցմունքները՛՛ միայն քաղաքական հետապնդումների դեպքում են լինում: ՛՛Խոստովանական ցուցմունքների՛՛ ձեռք բերման պրակտիկան, դրանց վրա կառուցված արդարադատության համը և հետևանքները հայտնի են և դրանք լուրջ սպառնալիք են հասարակության համար:

Պատրաստվե՞նք 1936-37ին, հատկապես, որ այն ծեծում է մեր դուռը: Բացե՞նք դուռը, դիմադրե՞նք, փախչե՞նք...